ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԾՁԲ-01

«21» փետրվարի 2023թ.

«Արցախփոստ» ՓԲԸ, այսուհետ «Կատարող»՝ ի դեմս տնօրեն Ն.Հակոբյանի, մի կողմից, և «՝ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի առանձնացված ստորաբաժանում «Սյունիքի մարզի առաջ ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմը», այսուհետ «Պատվիրատու» դեմս աշխատակազմի ղեկավար Գ. Հովհաննիսյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագի հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված պայմաններ Պատվիրատուի առաջադրանքով մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշվ ծառայությունները,իսկ Պատվիրատուն պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսվ պայմաններով ընդունել ծառայությունները և վճարել դրանց դիմաց:

1.2 Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով և փոստային կապի ոլորտը կարգավոր ՀՀ և ԱՀ օրենսդրությամբ, միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով սահմանվ կարգով և պայմաններով Պատվիրատուին մատուցել փոստային կապի ծառայություններ՝ այդ թվո հեռագրային ծառայություններ:

Փոստային կապի ծառայությունների բնութագրերը սահմանված են փոստային կապի ոլորտ կարգավորող ՀՀ և ԱՀ օրենսդրությամբ, միջազգային պայմանագրերով և դրանց հիման վր ընդունված այլ իրավական ակտերով:

1.3 Կատարողը, որպես ԱՀ փոստային կապի ազգային օպերատոր, փոստային կաս ծառայությունները մատուցելիս առաջնորդվում է փոստային կապի գործունեությունը կարգավոր ՀՀ և ԱՀ օրենսդրությամբ, միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով, որոնց տվյալ տեսակի ծառայությունների համար սահմանված են ծառայությունների մատուցման որոշա պայմաններ և ժամկետներ:

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի.

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը որակը՝ առանց միջամտելու կատարողի գործունեությանը:

2.1.2 Առանց Ծառայության արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սու պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները,եթե Կատարողի կողմ մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրով սահմանվ պահանջներին և /կամ/ խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը և Ծառայությունը կարող մատուցվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3 Չընդունել Ծառայության արդյունքը՝ ՀՀ և ԱՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին պայմանագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությա սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ:

2.1.4 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժաման հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Կատարողին հատուցելով հրաժարման արդյունքո պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կատարողին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայությ արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մաս անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարմ ենթակա գումարները:

2.2.3 Ծառայության դիմաց վճարումներ իրականացնելիս՝պայմանագրով նախատեսված հիմքե առկայության դեպքում Պատվիրատուն պարտավոր է ապահովել Կատարողի նկատմամբ տույժե ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ:

2.2.4 Որևէ սխալ կամ ոչ հավաստի (չճշտված), ինչպես նաև առևտրային գաղտնիք հանդիսաց տեղեկություն չտարածել Կատարողի և Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների որակ և այլ պայմանների վերաբերյալ:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխա մատուցված Ծառայության արդյունքը:

2.3.2 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմի ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուի պահանջել վճարելու փաստացի մատուցված Ծառայության համարժեք գինը, բացառությամբ սու պայմանագրի 6 և 2.1.4 կետերով նախատեսված դեպքերի:

2.3.3 Ցանկացած ժամանակ առանց լուծելու սույն պայմանագիրը նախնական ծանուցման միակողմանի, ժամանակավորապես կասեցնել սույն պայմանագրով սահմանված որոշ կամ բոլոր պարտավորությունների կատարումը, եթե Պատվիրատուն չի կատարում կամ ոչ պատշաճ կերպով կատարում Ծառայությունների ընդունման, դրանց դիմաց վճարման պարտավորությունները կա սույն պայմանագրով նախատեսված իր այլ պարտավորությունները:Սույն ենթակետո նախատեսված դեպքերում Կատարողն իր ծանուցմամբ սահմանում է այն ժամկետը ,որ ընթացքում Պատվիրատուն պարտավոր է վերացնել իր կողմից թույլ տրված պայմանագր պայմանների խախտումները: Եթե Պատվիրատուն չի վերացնում խախտումը սույն ենթակետո նախատեսված՝ Կատարողի կողմից ծանուցմամբ սահմանված ժամկետում, Կատարողը կարող լուծել սույն պայմանագիրը և պահանջել Պատվիրատուից վնասների հատուցում:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումյ Պատվիրատուի կողմից փոստային առաքանին ստանալուց հետո 15 օրվա ընթացքում առաքէ հասցեատիրոջը կամ ներկայացնել առաքման ուշացման հիմնավորումը:

2.4.2 Մատուցած Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերվելու դեպքու Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերություններ վերացումը:

2.4.3 Պայմանագրով ստանձնած Ծառայությունը ոչ պատշաճ կատարելու դեպքու պատասխանատվություն է կրում Կատարողը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պատվիրատուն Ծառայության մատուցման պահանջ առաջանալու դեպքում Կատարողին ներակայացնում իր կողմից ստորագրված փոստային առաքանու առաքման հաշվեցուցակի երկո օրինակ /Հավելված N1/, իսկ Կատարողը Ծառայության մատուցման ավարտից հետ Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հաշվեցուցակի մեկ օրինակը:

3.2 Ծառայությունը մատուցված է համարվում հաշվեցուցակը երկկողմանի ստորագրվելո պահից: Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստ

ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելու
փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյա
Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունն
Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման
արձանագրության 2 օրինակ:

3.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունն
համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա
մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի
ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրում
նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության
միջոցներ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցած ծառայության գինը կազմում է 2500000 / երկո
միլիոն հինգ հարյուր հազար / ՀՀ դրամ, որը որոշվում է ԱՀ կառավարության կողմից սահմանված
փոստային առաքանու տեղափոխման սակագների հիման վրա:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ: Դրամական
միջոցների վճարումը կատարվում է 3.1 կետով նախատեղված փաստաթղթի երկկողմանի
ստորագրված օրինակը Պատվիրատուի կողմից ստանալու պահից 10 բանկային օրվա
ընթացքում:

4.3 Պատվիրատուն ցանկության դեպքում կարող է նաև Կատարողին որոշակի գումար վճարել
որպես կանխավճար:

4.4 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2023
թվականի դեկտեմբերի 30-ը:Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են 03.01.2023թ-ից:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար
Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով,
Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված նորմերին
համապատասխան և ԱՀ օրենսդրությամբ: Սույն պայմանագրով նախատեսված
պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում կիրառվող տույժերի
և տուգանքների չափերը չեն կարող պակաս լինել պետական գնումների գործընթացը կարգավորող
Հայաստանի Հանրապետության և ԱՀ օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների
չափերից: Կատարողը պատասխանատվություն չի կրում, եթե հասցեատիրոջը փոստային
առաքանիները չեն առաքվել ոչ ստույգ և /կամ/ ոչ լիարժեք առաքման հասցեի, հասցեի
փոփոխության, ինչպես նաև հասցեատիրոջ բացակայության կամ Կատարողից անկախ այլ
պատճառով: Փոստային առաքանու վնասվելու կամ կորստի դեպքերում, Պատվիրատուի
իրավունքների իրականացումը կատարվում է փոստային կապի ծառայությունները կարգավորող
ՀՀ և ԱՀ օրենսդրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով
սահմանված կարգով:

5.2 Պայմանագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում
Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո
ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում
Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա

սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորություններ չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել ա պայմանագրից ծագած հակընդեմ պարտավորության հաշվանցումով, առանց կողմերի գրավոր կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր, կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ և ԱՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալու հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար:Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասները ամբողջ ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը: Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործունային է, ապ

նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է ՀՀ կառավարությունը:

7.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի օգուտները /խնայողություններ/ կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ ՀՀ և ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան ՀՀ և ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի 1 հավելվածը՝ բաղկացած 1 թերթից, հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմ	«Արցախփոստ» ՓԲԸ
Ք. Կապան, Մ.Ստեփանյան 3/2	Ք. Ստեփանակերտ
ՀՎՀՀ 02583241	Հ. Հակոբյանի 30
Հ/Հ 900311001169	ՀՎՀՀ 90001833
Կենտրոնական գանձապետարան	Հ/Հ 220001001831
	«Արցունքանկ»
Գ. Հովհաննիսյան	Ն.Հակոբյան